Կամաւորական խմբեր կազմակերպելով՝ Կովկասի հայ ղեկավար շրջանները նպատակ ունէին՝ մի կողմից մասնակցելով պատերազմին Թիւրքիայի դէմ՝ արագացնել Թիւրքահայերի ազատութիւնը, միւս կողմից՝ զինուած ուժեր ունենալով ռազմաճակատի առաջաւոր մասերում՝ նպաստել այնտեղի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին: Ենթադրւում էր, որ կամաւորական խմբերը արագ շարժումներով կարող էին առաջն առնել կամ մեղմացնել կոտորածները:

Իրականութեան մէջ, կամաւորական խմբերը խաղացին, գլխաւորապէս, զինուորական դեր և, այս տեսակէտից, անգնահատելի ծառայութիւն մատուցեցին ռուս բանակին: Նրանք ո՛չ միայն յառաջապահ-հետախուզական պաշտօններ էին կատարում, այլ և մասնակցում էին ընդհանուր ճակատամարտների կամ լուծում էին զինուորական ուրոյն խնդիրներ: Կովկասեան ռուս բանակի տարեգրութեան մէջ հայ կամաւորական խմբերն ունեն իրենց պատուաւոր տեղը թէ՛ կատարած հերոսական գործերով և թէ տուած բազմաթիւ ու թանգագին զոհերով: Բացի հարիւրաւոր պարզ մարտիկներից, պատերազմի դաշտում ընկան շատ քաջ ու ժողովրդական խմբապետներ, որոնց շարքին և Քեռին ու Խէչօն:*) Խմբապետներից ու կամաւորներից շատերը վարձատրուեցին քաջութեան նշաններով: Մի ահագին թիւ հայ երիտասարդների խմբերի մէջ ձեռք բերեց զինուորական փորձառութիւն և յետագային, մանաւանդ, Հայաստանի անկախութեան շրջանում, մեծ չափով օգտակար եղաւ հայ ժողովրդի և հանրապետութեան պաշտպանութեան գործին:

Կամաւորական խմբերը, սակայն, մի կաթիլ էին համեմատած այն ահագին օժանդակութեան հետ, որ հայ ժողովուրդը բերեց Ռուսաստանին պատերազմի ընթացքին: Ըստ պաշտօնական հաշուի, հայերի 13%-ը զինուոր էր զանազան ռազմաճակատներում: Ուրիշ խօսքով, 2 միլիոնոց ռուսահայութիւնը աւելի քան 250,000 զինուոր տուեց ռուս բանակին: Բացի այդ, նա իր ուժերը հասցրեց գերագոյն լարման և թիկունքում՝ մասնակցելով ռազմաճակատի օգնութեան յատկացուող բազմապիսի ձեռնարկների: Եւ այդ ամենը կատարւում էր մէկ նպատակով. Թիւրքահայկական դատի լուծման, Թիւրքահայաստանի ազատագրութեան համար:

Պատերազմի սկզբին հայկական շրջաններում տիրում էր ընդհանուր համոզում. մի քանի ամսւայ մէջ ռուսները կը գրաւեն Վանն ու Էրզրումը, և հայկական շրջանները կազատուեն թիւրքական լծից: «Ինչի՞ս պէտք են կօշիկ ու մուշտակ, ասում էր Անդրանիկը պատերազմի սկզբին, զինուորին կուտամ չարոխ ու հալա — և հինգ օրէն Վան եմ...»

Այս հաւատն էր, անշուշտ, պատճառ այն համազգային խանդավառութեան, որ առաջ բերեց կամաւորական շարժումը: Սակայն, օրեր ու ամիսներ անցան, և հայկական նահանգները մնացին չգրաւուած: Աւելին

---

*) Հայ կամաւորական շարժումը դեռ սպասում է իր պատմագրին: Նրա մասին ամփոփ գաղափար է տալիս զօր. Գ. Ղորղանեանի գիրքը՝ «La Participation des Arméniens à la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914—1918)», Paris, 1927, որ հրատարակուեց նաև հայերէն լեզուով «Հայրենիք» ամսագրի 1926—27թ. համարներում: